ՀԱԿԱԿՈՌՈՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀՀ–ԵՄ ՀԸԳՀ–ՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Ուսումնասիրությունը կատարել են հակակոռուպցիոն փորձագետներ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԸ

ԵՎ ՄԱՐԻԱՄ ՁԱԴՈՅԱՆԸ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ 5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6
Ի. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 9

1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ 9
1.1. Հակակոռուպցիոն կրթության իրականացման միջազգային փորձը՝ ըստ հակակոռուպցիոն մարմինների պրակտիկայի 9
1.2. Հակակոռուպցիոն կրթության իրականացման միջազգային փորձը՝ ըստ ՔՀԿ-ների և ուսումնական հաստատությունների պրակտիկայի 16

2. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ 18
2.1. Հակակոռուպցիոն կրթության իրականացման ուղենիշները ՀՀ-ում 18
2.2. Հակակոռուպցիոն կրթության իրականացման ուղենիշները ՀՀ-ում և դրանց կատարման մշտադիտարկման արդյունքները 19
2.3. Հակակոռուպցիոն կրթության իրականացման փորձը ՀՀ-ում ըստ ՔՀԿ-ների և ուսումնական հաստատությունների պրակտիկայի 26

II. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ 29

1. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ 29

2. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐ 34

2.1. Շահերի բախման կարգավորումների ներպետական օրենսդրության համառոտ նկարագիրը 34

2.2. Շահերի բախման ներպետական իրավակիրառ պրակտիկայի հակիրճ նկարագիր 45

2.3. Շահերի բախման ներպետական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի մշտադիտարկման արդյունքները 48

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 51

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՆ	**Արդարադատության նախարարություն**
ԲՀԿ	**Բարեվարքության հարցերով կազմակերպիչ**
ԲՈՒՀ	**Բարձրագույն ուսումնական հաստատություն**
ԳԱԱ	**Գիտությունների ազգային ակադեմիա**
ԵԽ	**Եվրոպայի Խորհուրդ**
ԵՄ	**Եվրոպական միություն**
ԵՊՀ	**Երևանի պետական համալսարան**
ԻԵՄ	**Իրավունքի Եվրոպա միավորում**
ԻՀԱ	**Իրավաբանների հայկական ասոցիացիա**
ԿԿՀ	**Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով**
ՀԸԳՀ	**Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր**
ՀԾՄ	**Հանրային ծառայության մասին**
ՀԿ	**Հասարակական կազմակերպություն**
ՀՀ	**Հայաստանի Հանրապետություն**
ՄԱԿ	**Միավորված ազգերի կազմակերպության**
ՄՄՈՒՀ	**Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն**
ՏՀԶԿ	**Տնտեսական համագործակցության և զարգացման Կազմակերպություն**
ՈՒՀ	**Ուսումնական հաստատություն**
ՔԾԳ	**Քաղաքացիական ծառայության գրասենյակ**
ՔԾՄ	**Քաղաքացիական ծառայության մասին**
ՔՀԿ	**Քաղաքացիական հասարակության կազմակերպություն**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ի կատարումն 2017 թվականի նոյեմբերի 24–ին ՀՀ–ի և ԵՄ–ի միջև ստորագրված ՀԸԳՀ–ի՝ ՀՀ վարչապետի 2019 թ.–ի հունիսի 1–ի թիվ 666–Լ որոշմամբ հաստատվել է ՀԸԳՀ–ի՝ ճանապարհային քարտեզը[1], որի անբաժանելի մասն են կազմում հետևյալ երկու հավելվածները.

- ԵՄ–ի և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված ՀԸԳՀ–ի կիրարկման ճանապարհային քարտեզ (այսուհետ նաև՝ Ճանապարհային քարտեզ–1):
- ՀՀ–ի և ԵՄ–ի և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված ՀԸԳՀ–ի վերաբերյալ Ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր (այսուհետ նաև՝ Ճանապարհային քարտեզ–2):

Ճանապարհային քարտեզ–1–ում 6–րդ գործողության ներքո նախատեսված է Կոռուպցիայի դեմ պայքարի 2019–2022թթ. ազգային ռազմավարության ընդունում: Ըստ էության, ի կատարումն նաև այս գործողության ՀՀ կառավարության 03.10.2019 թ.–ի թիվ N 1332–Ն որոշմամբ ընդունվել է ՀՀ 2019–2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունը (այսուհետ նաև՝ որրորդ հակակոռուպցիոն ռազմավարություն կամ Ռազմավարություն) և դրա իրականացման միջոցառումների (գործողությունների) ծրագիրը (այսուհետ՝ Միջոցառումների ծրագիր): Ռազմավարությամբ կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական երեք

1 Տես ՀՀ–ի և ԵՄ–ի միջև ստորագրված ՀԸԳԸ–ի՝ ՀՀ վարչապետի 01.06.2019 թ.–ի թիվ 666–Լ որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153164

ուղղություններն են՝ 1) կոռուպցիայի կանխարգելումը, 2) կոռուպցիոն հանցագործությունների քննությունը, 3) հանրային իրազեկում և հակակոռուպցիոն կրթությունը: Եվս երկու ուղղություն վերաբերում են հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացմանը և մոնիթորինգին, հսկողությանը ու դրա վերաբերյալ հանրային հաղորդակցությանը: Միջոցառումների ծրագրում նախատեսված է 43 միջոցառում, որից 6–ը ընդգրկված են հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման ոլորտում, 2–ը՝ շահերի բախմանն առնչվող կանխարգելման ոլորտում: Ըստ այդմ, ՀԸԳՀ պարտավորությունների մշտադիտարկման նպատակով գնահատման են ենթարկվել նշյալ միջոցառումները: Այս միջոցառումների գնահատման նպատակով, ուսումնասիրման են ենթարկվել ՀՀ ԱՆ–ի կողմից հրապարակած Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019–2022 թթ. միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույցը (այսուհետ՝ **Եզրափակիչ զեկույց**)[2], ԻՀԱ–ի, ԻԵՄ–ի, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության և Հայաստանի ՔՀԿ–ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019–2022 թթ. միջոցառման ծրագրի 2022 թ.–ին իրականացման ենթակա գործողությունների կատարման հասարակական մշտադիտարկման արդյունքները (այսուհետ՝ **Հասարակական մշտադիտարկման զեկույց**), համապատասխան իրավական ակտերը, ինպես նաև կատարվել է անհրաժեշտ գրասենյակային հետազոտություն, ներառյալ՝ ուսումնասիրվել են ՀՀ–ում գործող բուհերի կրթական ծրագրերի ուսումնական պլանները: Ընդ որում, պետք է նշել, որ կան միջոցառումներ, որոնց գնահատումը տարբերվում է վերը նշված երկու զեկույցներում: Եզրափակիչ զեկույցը կենտրոնանում է միջոցառումների ընթացակարգային (քանակական) գնահատականի վրա, իսկ Հասարակական մշտադիտարկման զեկույցը՝ ներկայացնում է միջոցառումների կատարման քանակական և որակական գնահատականներ:

Հակակոռուպցիոն կրթության ոլորտում գործողությունների շահառուներ են

2 Տես ԱՆ–ի Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019–2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույցը, https://www.moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf

հանդիսացել հանրային ծառայողները, աշակերտները և ուսանողները: Շահերի բախմանն առնչվող կանխարգելման ոլորտում գործողությունների շահառուներ են հանդիսացել պետական և ՏԻՄ մարմինների պաշտոնատար անձինք ամբողջ ծավալով:

Հարկ է նաև նշել, որ ներկայում մշակման փուլում է գտնվում հինգերորդ հակակոռուպցիոն ռազմավարությունը, որը մշակվում է ՀՀ ԱՆ նախարարի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից[<?>]: Հակակոռուպցիոն կրթությունը և կոռուպցիայի կանխարգելման բլոկը, ներառյալ շահերի բախման կարգավորումների կատարելագործումը ևս ներառված է լինելու նոր ռազմավարության շրջանակներում:

<?> https://armla.am/49683.html

I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Մի շարք երկրներում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում հակակոռուպցիոն կրթությունը հանդիսանում է կարևորագույն օղակ, և այն իրականացնում են ինչպես լիազոր հակակոռուպցիոն մարմինները, այնպես էլ ՔՀԿ–ները և ուսումնական հաստատությունները:

1.1. Հակակոռուպցիոն կրթության իրականացման միջազգային փորձը՝ ըստ հակակոռուպցիոն մարմինների պրակտիկայի

ՀՈՆԿ ԿՈՆԳ

Հոնկ Կոնգում հակակոռուպցիոն կրթությունը կազմակերպվում է Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի չորս բաժիններից մեկը՝ Համայնքների հետ կապերի բաժինը ունի երկու հիմնական գործառույթ.

1. հակակոռուպցիոն կրթության իրականացում,
2. հանրային ծառայությունների մատուցում՝ կոռուպցիայի դեմ պայքարում:

Այս բաժինը մշակել և տրամադրում է կանխարգելիչ կրթական ծառայություններ պետական հատվածին, ՀԿ–ներին, երիտասարդներին, դպրոցներին և այլն: Ըստ այդմ, բաժինը՝

1. աջակցում է վարքագծի կանոնների ձևակերպմանը և վերանայմանը,
2. կազմակերպում է տարբեր թեմաներով դասընթացներ (օրինակ՝ հակակո-

ռուպցիոն օրենսդրությունը, կոռուպցիայի տեսանկյունից ռիսկային ոլորտները, անձնակազմի բարեվարքությունը, շահերի բախման լուծումը և այլն),

3. տրամադրում է կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ խորհրդատվություն և տեղեկատվական բնույթի նյութեր,
4. ընդունում է կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ բողոքները և հարցումները:

ՄԱԼԱԶԻԱ

Մալազիայի հակակոռուպցիոն հանձնաժողովը ունիվերսալ մարմին է և ընդունում է կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարություն՝ երեք ուղղություններով, որը բխում է 2009 թվականի Մալայզիայի հակակոռուպցիոն ակտից (ակտ 694) (Բաժին 7): Վերը նշված երեք ուղղություններից է **հասարակության կրթությունը,** որն ունի երկու ենթաուղղություն՝

1. Կոռուպցիայի դեմ հասարակության կրթում,
2. Կոռուպցիայի դեմ պայքարում հասարակության ներգրավում և աջակցում[<?>]:

Հասարակության կրթությունը բաղկացած է հետևյալ բովանդակությունից և դրանից բխող միջոցառումներից[<?>]՝

a. Ինչ է կոռուպցիան[<?>], որը ներառում է.

i. Կոռուպցիոն դեպքերն ու դրսևորումները,
ii. Կոռուպցիայի մասին չհայտնելու դեպքում կիրառվող պատասխանատվությունը,
iii. Կոռուպցիայի մասին հայտնելու դեպքում որպես ազդարար՝ պաշտպանությունից ու երաշխիքներից օգտվելու կարգավորումները,

b. Հակակոռուպցիոն կրթություն[<?>], որը ներառում է.

i. Հակակոռուպցիոն կրթության նպատակները, խնդիրները, մոտեցումները, թիրախ խմբերը,

<?> Տես մանրամասն հետևյալ հղումներում. https://www.sprm.gov.my/index.php?id=21&page_id=75&articleid=401 https://www.sprm.gov.my/index.php?id=21&page_id=75&articleid=234
<?> https://www.sprm.gov.my/index.php?id=21&page_id=92
<?> https://www.sprm.gov.my/index.php?id=21&page_id=75&articleid=478
<?> https://www.sprm.gov.my/index.php?id=21&page_id=75&articleid=692

ii. Պատասխանատու անձի տվյալները,

c. Կոռուպցիայից զերծ խոստում[<?>], որը ներառում է.

i. «Կոռուպցիայի զերծ խոստում» նախաձեռնության նպատակը, կարևորությունն ու իրականացման կարգը,
ii. Խոստմանը միանալու ցանկություն ունեցող խմբերի դասակարգումները,
iii. Խոստմանը միացած խմբերի մասին տեղեկություն,
iv. Պատասխանատու անձի տվյալները,

d. Հակակոռուպցիոն ուսանողական խումբ[<?>], որը ներառում է.

i. Հակակոռուպցիոն ընկալման բարձրացմանն ուղղված ստանդարտ/նախաձեռնություն է, որն իրականացվում է ուսանողների և դասախոսների կողմից:
ii. Նախաձեռնության արժեքները, իրականացման կարգը, թիրախ խմբերը:

e. Հակակոռուպցիոն հերոսներ (Wira Հակակոռուպցիոն ծրագիր)[<?>], որը ներառում է.

i. Ծրագիր՝ ուղղված տարրական և միջնակարգ դպրոցների աշակերտներին և նրանց ուսուցիչներին: Ծրագիրը հաստատվել է Մալայզիայի կրթության նախարարության կողմից:
ii. Ծրագրի ընթացքում հիմնական գործողությունները ներառում են ճեպազրույցներ, տեսադիտումներ, հակակոռուպցիոն խաղեր և քարոզչական նյութերի տարածում:
iii. Ծրագիրը իրականացվում է 2014 թվականից և ռազմավարությամբ ներկայացվում է ծրագրի իրականացման վիճակագրությունը:

<?> https://www.sprm.gov.my/index.php?id=21&page_id=75&articleid=479
<?> https://www.sprm.gov.my/index.php?id=21&page_id=134&articleid=693,https://www.sprm.gov.my/index.php?page_id=134&articleid=693&language=my
<?> https://www.sprm.gov.my/index.php?id=21&page_id=75&articleid=1074,https://www.sprm.gov.my/index.php?page_id=75&articleid=1074&language=my

ԼԱՏՎԻԱ

Լատվիայի Կոռուպցիայի կանխարգելման և պայքարի բյուրոյի գործառույթներից է հակակոռուպցիոն կրթության իրականացումը, որն իրականացվում «Կոռուպցիայի կանխարգելման և պայքարի Բյուրոյի մասին» օրենքի և հարակից օրենսդրության հիման վրա[<?>]: 2023 թվականի մարտի 14–ին Լատվիայի նախարարների կաբինետը հաստատել է[<?>] Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների 2023–2025 թթ. ծրագիրը[<?>]: Ըստ ծրագրի՝ հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման բարձրացման ոլորտում ուրվագծվել են հետևյալ խնդիրները.

a. *Հանրային հատվածում ներքին վերահսկողության համակարգերի ամրապնդում, բուհերի հետ համագործակցության զարգացում:* Օրինակ՝ «Ուսուցանողների ուսուցում՝ հանրային հաստատություններում կոռուպցիայի կանխարգելման ոլորտում» թեմաներով շարունակական վերապատրաստումների կազմակերպում, որը հնարավորություն է տալու՝
   i. բարձրացնել գիտելիքները և կատարել փորձի փոխանակում հանրային հաստատություններում ներքին հսկողության համակարգերի ներդրման, պահպանման և զարգացման վերաբերյալ, ներառյալ լավագույն փորձի օրինակները,
   ii. ձևավորել համագործակցություն բուհերի հետ, մշակել և ներդրել ուսումնական հակակոռուպցիոն դասընթացներ (ոչ պարտադիր՝ ընտրովի):

b. *Մասնավոր հատվածում հակակոռուպցիոն միջոցառումների ներդրում:* Օրինակ՝ բարձրացնել մասնավոր հատվածի ներկայացուցիչների իրազեկվածությունը պետական գնումների ընթացակարգերի և այդ գործընթացում հնարավոր ռիսկերի և խախտումների մասին (կոռուպցիոն ռիսկերի ցուցիչներ, մրցակցային օրենսդրության հնարավոր խախտումներ), այդ թվում՝

<?> Տես «Կոռուպցիայի կանխարգելման և պայքարի Բյուրոյի մասին» օրենքի և հարակից օրենսդրության շրջանակը, https://www.knab.gov.lv/lv/korupcijas-noversanas-un-apkarosanas-biroja-normativie-akti

<?> Տես Լատվիայի նախարարների կաբինետը որոշումը, https://www.knab.gov.lv/lv/jaunums/ministru-kabinets-apstiprina-korupcijas-noversanas-un-apkarosanas-pasakumu-planu-2023-2025-gadam

<?> Տես Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների 2023–2025 թթ. ծրագիրը, https://www.knab.gov.lv/en/policy-documents

   i. բարձրացնել նրանց գիտելիքներն ու պատկերացումները պետական գնումների ոլորտում օրենսդրական կարգավորումների վերաբերյալ,
   ii. ամրապնդել մասնավոր հատվածի ներկայացուցիչների գիտելիքները իրենց իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ՝ ներքին համակարգերում և իրավիճակներում կոռուպցիային հակազդելու ուղղությամբ:

c. *Վերանայել հակակոռուպցիոն թեմաներով մշակված ուսումնական նյութերը դպրոցական և երիտասարդական ծրագրերի շահառուների համար և կիրառել ժամանակակից մեթոդներ ու մոտեցումներ երիտասարդներին կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով կրթելու գործում* (2022 թվականին մշակվել է հակակոռուպցիոն խաղ 7–9–րդ դասարաններում սովորողների համար, 2023 թվականին՝ 10–12–րդ դասարաններում սովորողների համար):

d. *Ապահովել հասարակության (լայն առումով) հանրային իրազեկումն ու նրանց հետ հաղորդակցումը:* Օրինակ՝ առցանց հաշվետվողական գործիքի ներդրման խթանում, հանրային իրազեկման արշավների կազմակերպում, հասարակական կարծիքի հարցումների անցկացում:

ԼԵՀԱՍՏԱՆ

Լեհաստանում գործող հակակոռուպցիոն մարմինը Կենտրոնական Հակակոռուպցիոն բյուրոն է, որը գործում է 2006թ.–ի հունիսին ընդունված «Կենտրոնական հակակոռուպցիոն բյուրոյի մասին» օրենքի հիման վրա: Բյուրոյի գործառույթներից է հակակոռուպցիոն կրթության իրականացումը[<?>]: Այս կապակցությամբ, 2014 թվականին բյուրոն ստեղծեց իր էլեկտրոնային ուսուցման առցանց հարթակը[<?>]: Այն առաջին հանրային, անվճար հակակոռուպցիոն հարթակն էր,

<?> Տես ԻՀԱ–ի և Հայաստանի ՔՀԿ–ների հակակոռուպցիոն կոալիցիայի Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ ուսումնասիրությունը, https://bit.ly/3pIKnCH, էջ 57

<?> Տես Լեհաստանի Կենտրոնական Հակակոռուպցիոն բյուրոյի էլեկտրոնային ուսուցման առցանց հարթակը (E-learning platform of the Central Anti-corruption Bureau), https://antifraud-knowledge-centre.ec.europa.eu/library-good-practices-and-case-studies/good-practices/e-learning-platform-central-anti-corruption_en

որը նախատեսված էր պաշտոնատար անձանց, քաղաքացիական հասարակության, մասնավոր ոլորտի կազմակերպությունների, ուսանողների, աշակերտներին և բոլոր նրանց համար, որոնք հետաքրքրված են հակակոռուպցիոն թեմաներով: Առցանց դասընթացի նպատակն էր բարձրացնել կոռուպցիայի մասին պետական պաշտոնյաների, հանրային ծառայողների, պետական կառավարման մարմինների և մասնավոր ոլորտի ներկայացուցիչների իրազեկվածության մակարդակը: Դասընթացի բովանդակությունը հիմնված էր իրական դեպքերի ուսումնասիրությունների վրա: Դասընթացի շրջանակներում մասնակիցները ծանոթանում են կոռուպցիայի դեմ պայքարում հնարավոր վարքագծին, մասնակիցներին տրամադրվում է նաև բյուրոյի կողմից պատրաստված կոնկրետ թեմատիկաներով ուսուցողական նյութեր: Բյուրոյի կողմից հարթակի միջոցով իրականացված հակակոռուպցիոն ուսուցումը ներառում է երեք ուղղություն.

1. **Կոռուպցիան պետական կառավարման ոլորտում** – բաղկացած է 9 դասից՝ իրավական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ հիմնական տեղեկատվության, ինչպես նաև համակարգային լուծումների վերաբերյալ,
2. **Կոռուպցիան բիզնեսում** – բաղկացած է 10 դասից՝ ոլորտային ակնարկի տեղեկատվության, վարչական և տնտեսական միջավայրին առնչվող հակակոռուպցիոն վարքագծի և կոռուպցիոն դրսևորումների օրինակներով,
3. **Կոռուպցիայի դեմ պայքար** – բաղկացած է 9 դասից՝ կոռուպցիոն վարքագծի սոցիալական հետևանքների, պետության և քաղաքացիների վրա դրանց ազդեցության վերաբերյալ:

Լեհաստանի 2018–2020 թվականների պետական հակակոռուպցիոն ծրագրի ուղղություն էր նաև հակակոռուպցիոն կրթությունը[<?>]: Ծրագրի իրականացման մեխանիզմներից էր՝

a. պետական պաշտոնյաների և հանրային գործառույթներ իրականացնող անձանց կրթության և վերապատրաստման ծրագրերում հակակոռուպցիոն կրթության իրականացումը,

b. հակակոռուպցիոն կրթության միջոցով հանրային իրազեկվածության ձևավորումը:

[<?>] Տես Լեհաստանի 2018–2020 թթ. պետական հակակոռուպցիոն ծրագիրը, https://sip.lex.pl/akty-prawne/mp-monitor-polski/rzadowy-program-przeciwdzialania-korupcji-na-lata-2018-2020-18671977?unitId=par(2)

ԲՈՏՍՏՎԱՆԱ

Բոտստվանայում գործում է Կոռուպցիայի և տնտեսական հանցագործությունների դեմ տնօրինությունը, որը հիմնադրվել է 1994 թ.–ին՝ «Կոռուպցիայի և տնտեսական հանցագործությունների գործերով» ակտի հիման վրա[<?>]: Տնօրինության մանդատը ներառում է՝

1. կոռուպցիայի և տնտեսական հանցագործությունների քննություն,
2. հակակոռուպցիոն կրթություն,
3. կոռուպցիայի կանխարգելում:

Տնօրինության Հանրային կրթության բաժնի գործառույթը հակակոռուպցիոն կրթության իրականացումն է, որը ներառում է նաև հանրության հետ սերտ աշխատանքներ՝ վերջիններիս կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավվելու և պետությանը համախոհ դարձնելու ուղղությամբ[<?>]: Բացի այդ, երեխաների հակակոռուպցիոն կրթությունը տնօրինությունը դիտում է որպես նրա առաքելության առանցքային մաս և հակակոռուպցիոն կրթությունը ներառված է Բոտսվանայի ազգային ուսումնական ծրագրում, որպես երիտասարդության կոռուպցիայի դեմ արշավի մի մաս: Գործում են հակակոռուպցիոն ակումբներ ինչպես կրտսեր, այնպես էլ ավագ միջնակարգ դպրոցներում[<?>]:

Հարկ է նաև խոսել այն մասին, որ վերջին շրջանում կոռուպցիայի դեմ պայքարը իրականացվում է նաև արհեստական բանականության գործիքների ներդրման

[<?>] Տես ԻՀԱ–ի և Հայաստանի ՔՀԿ–ների հակակոռուպցիոն կոալիցիայի Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ ուսումնասիրությունը, https://bit.ly/3pIKnCH, էջ 113

[<?>] Տես Տնօրինության կայքէջը. https://www.gov.bw/ministries/directorate-corruption-and-economic-crime

[<?>] Տես Բոտսվանայի հակակոռուպցիոն փորձի ակնարկը, https://knowledgehub.transparency.org/assets/uploads/helpdesk/Country_Profile_Botswana_2014.pdf

միջոցով: Օրինակ՝ 2018 թվականին Google–ը հայտարարեց Գանայում արհեստական բանականության հետազոտական կենտրոնի բացման մասին, որտեղ կազմակերպությունը մտադիր էր աշխատել որոշում կայացնողների հետ՝ մի շարք ոլորտներում, ինչպիսիք են՝ առողջապահությունը, գյուղատնտեսությունը և կրթությունը, արհեստական բանականության գործիքները կիրառելու վերաբերյալ[<?>]: Այս գործիքի կիրառմանը զուգընթաց, ձեռնարկվեցին ակտիվ միջոցառումներ, որոնք ուղղված էին տարբեր շահառուների թվային (digital) անվտանգության և գրագիտության բարձրացման ուղղությամբ:

1.2. Հակակոռուպցիոն կրթության իրականացման միջազգային փորձը՝ ըստ ՔՀԿ–ների և ուսումնական հաստատությունների պրակտիկայի

Մասնագիտացված ՔՀԿ–ները, կամ նախաձեռնությունները, ՈՒՀ–ները իրենց նպատակների և մանդատի շրջանակներում աջակցում են պետությանը՝ հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման աշխատանքներում: Հակակոռուպցիոն կրթությունը, որպես կանոն, կազմակերպվում է ՈՀ–երում և դպրոցներում հակակոռուպցիոն կրթության դասավանդմամբ, ամառային դպրոցների, բարեվարքության ճամբարների և հակակոռուպցիոն դասընթացների կազմակերպմամբ: Ստորև ներկայացվում է մի քանի համանման օրինակներ:

Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիա, Լաքսենբուրգ, Ավստրիա

Ակադեմիան նախաձեռնվել է ՄԱԿ–ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի, Ինտերպոլի, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի, Ավստրիայի Հանրապետության և այլ շահագրգիռ կողմերի կողմից: Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի գաղափարն առաջացել է Ինտերպոլի հակակոռուպցիոն փորձագետների միջազգային խմբի կողմից: 2005 թ.–ին ՄԱԿ–ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի ընդունումը և դրա հետագա կիրառումը մի շարք երկրներում նույնպես կարևոր դեր խաղացին այս նախաձեռնության իրագործման հարցում: Վերջին տվյալներով, մասնավորապես՝ 2021 թվականի դրությամբ Ակադեմիան ներգրավել

[<?>] https://www.u4.no/publications/artificial–intelligence–a–promising–anti–corruption–tool–in–development–settings.pdf , էջ 26

է ավելի քան 4300 հակակոռուպցիոն պրակտիկանտների՝ 168 երկրներից՝ վերապատրաստման և կարողությունների զարգացման նպատակով: Ակադեմիայում ուսումնառությունը թույլ է տվել կայուն ազդեցություն ունենալ իրենց համապատասխան երկրներում կամ տարածաշրջաններում և նպաստել կոռուպցիայից զերծ միջավայր ունենալու գործընթացներին: Ակադեմիան առաջարկում է ինչպես կարճաժամկետ դասընթացներ, այնպես էլ հակակոռուպցիոն մագիստրոսական ծրագրեր[<?>]:

Մալայզիայի հակակոռուպցիոն ակադեմիա

Ակադեմիան պատասխանատու է Մալազիայի հակակոռուպցիոն հանձնաժողովի ծառայողների և աշխատակազմի կրթական ծրագրերի կառավարման համար, որը նպատակ ունի բարձրացնել նրան պրոֆեսիոնալիզմն ու արհեստավարժությունը: Կրթական ծրագրերը ընդգրկում են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝ կոռուպցիոն գործերի հետաքննությունը, քրեական հետապնդումը, կանխարգելումը, խորհրդատվությունը և կառավարումը: Բաժանմունքը բաղկացած է մի քանի կենտրոններից և դպրոցներից[<?>]:

«Բարեվարքության ամառային դպրոց», Թրանսփարենսի ինթերնեշնլ միջազգային կազմակերպություն, Լիտվա

Դպրոցը ամենամյա դասընթաց է, մեկ շաբաթ տևողությամբ: Այն կազմակերպվում է Թրանսփարենսի Ինթերնեշնլ Լիտվայի ներկայացուցչությունը՝ Լիտվայի Միկոլաս Ռոմերիս համալսարանի հետ համագործակցությամբ: Ամառային դպրոցին մասնակցում են աշխարհի տարբեր երկրների հանրային, մասնավոր հատվածների, ՀԿ–ների և գիտա–կրթական հաստատությունների ներկայացուցիչներ, որտեղ ընթացող դասընթացները վարում են հակակոռուպցիոն, կառավարման, հետաքննող լրագրության և այլ թեմաների փորձագետներ[<?>]:

[<?>] Մանրամասները հասանելի են այստեղ. https://www.iaca.int/who–we–are/about–us/annual–reports.html
[<?>] https://www.sprm.gov.my/index.php?page_id=75&articleid=521&language=en
[<?>] Դպրոցի մասին մանրամասները այստեղ՝ https://transparencyschool.org/about–school/

2. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀՀ–ՈՒՄ

2.1 Հակակոռուպցիոն կրթության իրականացման ուղենիշները ՀՀ–ում

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ–ում հակակոռուպցիոն կրթության իրականացման միջոցառումների նախատեսված են ՀՀ 2019–2022 թվականների ռազմավարությամբ և դրա իրականացման միջոցառումների ծրագրով: Մասնավորապես, Ռազմավարության 4.7–րդ կետը նվիրված է հակակոռուպցիոն կրթությանն ու իրազեկմանը: Համաձայն նույն աղբյուրի՝ ՀՀ–ում հակակոռուպցիոն կրթության և հակակոռուպցիոն ոլորտում իրավագիտակցությունը ցածր մակարդակի վրա է: Այս կապակցությամբ, Ռազմավարությամբ և Միջոցառումների ծրագրով նախատեսվել էին հանրային ծառայողների պարբերական հակակոռուպցիոն կրթության իրականացում, որի համար իրավասու մարմինը ԿԿՀ է: Սրա հիման վրա, ԿԿՀ–ն այժմ մշակում է կրթական ծրագրեր, ուղեցույցներ և խորհրդատվական զեկույցներ:

Հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման ուղղության մյուս թիրախը ուսանողներն ու աշակերտներն են: Մասնավորապես, նախատեսված էր վերանայել «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինները և բովանդակությունը, որոնք կարտացոլեն կառավարության որդեգրած մոտեցումները կոռուպցիայի դեմ պայքարում: Այստեղ նախատեսվում էր նաև քայլեր ձեռնարկել հակակոռուպցիոն կրթությունը՝ որպես ուսուցման համար ոչ պարտադիր դասընթաց բուհերում և ՄՄՈՒՀ–երում ներառելու ուղղությամբ:

Ռազմավարությունը հակակոռուպցիոն կրթության շրջանակներում նախատեսում էր նաև պետության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմինների հետ հարաբերակցվելիս անձանց իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման, ազդարարման համակարգի առանձնահատկությունների, տեղեկատվության ազատության երաշխիքների, հանրային ծառայողների էթիկայի կանոնների վերաբերյալ հանրության և հանրային ծառայողների տեղեկացվածության բարձրացում, որի նպատակով նախատեսված էր մշակել և հաստատել հանրային իրազեկման արշավների իրականացման տարեկան ծրագրեր:

2.2. Հակակոռուպցիոն կրթության իրականացման ուղենիշները ՀՀ–ում և դրանց կատարման մշտադիտարկման արդյունքները

Ռազմավարության Միջոցառումների ծրագրով հակակոռուպցիոն կրթության ու հանրային իրազեկմանը նվիրված է ծրագրի 4–րդ ոլորտը, որի ներքո նախատեսված են իրականացման ենթակա 6 գործողություն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 37. Հանրային իրազեկման արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում: Ըստ **եզրափակիչ զեկույցի**՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ** և հաղորդակցման գործողությունների ծրագիրը[<?>] հաստատվել է Վարչապետի 2022 թվականի հուլիսի 18–ի N 820–Լ որոշմամբ: Ըստ ՀՀ ԱՆ–ի՝ մշակման շրջանակում հիմք են ընդունվել նախորդ տարիների մոնիթորինգի և գնահատման արդյունքներով բացահայտված իրազեկման խնդիրները, քննարկումներ են եղել հիմնական շահառու պետական մարմինների մամուլի քարտուղարների հետ՝ հասարակությանը հուզող հիմնական հակակոռուպցիոն իրազեկման խնդիրների պարզման նպատակով: Հիշյալի հաշվառմամբ կազմվել է վերը նշված հաղորդակցման գործողությունների ծրագիրը: Ըստ ԱՆ–ի՝ Հաղորդակցման

<?> Տե՛ս Հաղորդակցման գործողությունների ծրագիրը, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166032

գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվել են Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման ընթացքի և դրա արդյունքում իրականացվող բարեփոխումների վերաբերալ իրազեկման արշավներ հեռուստատեսությամբ, սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում գովազդային տեսահոլովակների հեռարձակման/ցուցադրման, սոցիալական ցանցերում, պաշտոնական կայքերում և զանգվածային լրատվության միջոցներում տեղեկատվական նյութերի հրապարակման միջոցով: Ըստ ԿԿՀ–ի՝ 2022 թվականի փետրվար ամսին ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի շրջանակներում իրականացվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հաղորդակցության կարիքների գնահատման վերլուծություն (վերջինս հրապարակման ենթակա չէ, քանի որ նախատեսված է ներքին օգտագործման համար), որն էլ հիմք է հանդիսացել ԿԿՀ–ի իրազեկման ծրագրերի մշակման համար: Ըստ **Հասարակական մշտադիտարկման զեկույցի՝** հաղորդակցման գործողությունների ծրագրի իրականացման հաշվետվությունը[<?>] մշակելիս գործողությունների չափում չի կատարվել: Հասարակության հակակոռուպցիոն ընկալման և գիտակցության վրա հաղորդակցման գործողությունների ծրագրի իրականացման ազդեցության գնահատում նույնպես չի կատարվել: Պլանը կարելի է ենթադրել, որ ժամանակավրեպ է եղել, և վերաբերել է միայն վերջին վեց ամիսներին: Ըստ այդմ, քանակական գնահատումների արդյունքներով գործողությունը **կատարված է մասնակի**, իսկ որակական արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **իրականացված է ոչ ամբողջական (ոչ համապատասխան է ամբողջական խնդրի (արդյունքի) նպատակին)**:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 38. «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում: Ըստ եզրափակիչ զեկույցի՝

<?> Տես Հաղորդակցման գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը, https://moj.am/storage/uploads/REPORT%20ON%20COMMUNICATION%20ACTION%20PLAN.pdf

գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ**: ՄՄՈՒՀ–երի 2–4–րդ կուրսերում, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ՈՒՀ–երի 1–ին–3–րդ կուրսերում մշակվել և իրականացվում է հակակոռուպցիոն թեմատիկայով առարկայական ծրագրեր: «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան բուհերում դասավանդվում է 2021–2022 ուսումնական տարվանից՝ հասարակագիտական առարկաների շրջանակում: Ըստ **Հասարակական մշտադիտարկման զեկույցի՝** «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» ուսուցման ազդեցության գնահատման մեխանիզմ առկա չէ, որով հնարավոր կլինի հստակ գնահատել դասընթացի կամ առարկայական ծրագրի շրջանավարտի մոտ գործողության վերջնարդյունքը: Այս գործողության մասով **մտահոգիչ են գնահատվել նաև սահմանված վերստուգիչ ցուցանիշները**, որոնք ավելի շատ իրավիճակային են, ոչ թե համակարգային: Օրինակ վերջին տարվա ցուցիչներից մեկն է՝ երկու դասընթացի ցուցադրում, սակայն պարզ չէ, թե ինչ արդյունք դա կարող է տալ: Ըստ այդմ, քանակական գնահատումների արդյունքներով գործողությունը **կատարված է մասնակի**, իսկ որակական արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **իրականացված է ոչ ամբողջական**:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 39. Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում: Ըստ եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** Հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների բովանդակությունը փոփոխվել է, ավագ դպրոցների աշակերտների դասագրքերում ներառվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսուցողական նյութեր, սակայն այդ նյութերի ուսուցանումն իրականացվել է միայն Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում: Միաժամանակ, ԿԿՀ–ն իր լիազորությունների շրջանակներում 2022 թվականի ընթացքում Երևանի և մարզերի դպրոցներում իրականացրել է «Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն» թեմայով իրազեկման բնույթի հանդիպումներ՝ մանկավարժների և դպրոցահասակ երեխա-

ների ծնողների շրջանում: Ըստ **Հասարակական մշտադիտարկման զեկույցի՝** 40 դպրոցի փոխարեն միայն Տավուշի մարզի 25 դպրոցների 9, 10, 11 դասարաններում են ներդրվել ուսուցողական նյութերը: Գիտելիքների նախնական (pre) և վերջնական (post) ստուգում չի կատարվել: Գնահատման ազդեցության գնահատում ևս չի կատարվել, քանի որ արդյունքները ամփոփվելու են 2023 թվականի մայիս ամսին: Ըստ այդմ, քանակական գնահատումների արդյունքներով գործողությունը **կատարված է մասնակի**, իսկ որակական արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **իրականացված է ոչ ամբողջական**:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 40. Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության թեմայով: Ըստ եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** ՔԾԳ–ը կազմակերպել է «Բարեվարքություն» թեմայով վերապատրաստումներ քաղաքացիական ծառայողների, այդ թվում ԲՀԿ–ների և նրանց փոխարինող պաշտոնատար անձանց համար: Համաձայն ԿԿՀ–ի՝ տեղի է ունեցել պետական կառավարման համակարգի մարմինների բարեվարքության հարցերի քննարկման նպատակով աշխատաժողով, որի ընթացքում, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններին (նպատակը, կառուցվածքը, կապը ԲՀԿ–ների գործունեության հետ), հայտարարագրման համակարգին: Ըստ **ԿԿՀ–ի՝** տիպային կանոնների հաստատումից առաջ՝ մշակման փուլում կազմակերպվել է նշված համաժողովը՝ այդ թվում նաև հարցադրումներ/կարծիքներ հավաքագրելու նպատակով: Ըստ **Հասարակական մշտադիտարկման զեկույցի՝** հիմնական մտահոգությունը կայանում էր նրանում, որ վերապատրաստման կազմակերպման ժամանակ դեռևս ընդունված չեն եղել հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները և քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը, ինչը հնարավորություն չի տվել առավել թիրախային վերապատրաստում անցկացնել: Վերապատրաստման մասնակիցների գիտելիքների նախնական (pre) և վերջնական (post) ստուգում չի կատարվել: Վերապատրաստման արդյունքները ազդեցության մակարդակում ևս չեն գնահատվել:

Նաև հարկ է նշել, որ հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները ընդունվել են 2022 թվականի հունիսի 17–ին: Տիպային կանոնների ընդունումից հետո, դրանց տեղակայանցման, ինչպես նաև ընդհանուր բարեվարքության համակարգի տարրերի և ԿԿՀ–ի գործառույթների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով ԿԿՀ–ն ԱՄՆ ՄԶԳ համագործակցությամբ իրականացրել է ՀՀ թվով 6 մարզերի հանրային ծառայողներ՝ այդ թվում բարեվարքության հարցերով կազմակերպիչների վերապատրաստումներ/իրազեկման արշավներ: Ըստ այդմ, քանակական գնահատումների արդյունքներով գործողությունը **կատարված է մեծամասամբ**, իսկ որակական արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **իրականացված է ոչ ամբողջական**:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 41. Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում: Ըստ եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** Ըստ ՔԾԳ–ի՝ հեռավար ուսուցման մոդուլներին մասնակցել են քաղաքացիական ծառայողներ, որոնք զբաղեցրել են ՔԾ ղեկավար և մասնագիտական պաշտոններ: Հեռավար ուսուցման ծրագրերի թեմաներից է եղել բարեվարքությունը: Ըստ ԿԿՀ–ի՝ ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ են քաղաքացիական ծառայողների համար բարեվարքության (հակակոռուպցիոն) իրազեկվածության բարձրացման նպատակով թվային հարթակի ստեղծման և գործարկման աշխատանքները, ինչը նպատակ է հետապնդում մշակել և ստեղծել ժամանակակից, օգտագործողի համար հարմար և տվյալների պաշտպանությանը համապատասխան ուսուցման էլեկտրոնային հարթակ, որն առանձնահատուկ նշանակություն կունենա ուսուցման բովանդակությունը նպատակային կերպով փոխանցելու կարողության տեսանկյունից: Ուսուցման հարթակի բազմակողմանի և գտնվելու վայրից անկախ օգտագործումը հնարավոր կլինի նաև շարժական սարքերում: Սույն գործողության շրջանակներում 2022 թվա-

կանին ԿԿՀ–ում տեղի է ունեցել հանդիպումներ վերոգրյալ գործողությամբ ներգրավված փորձագետների և հակակոռուպցիոն կրթություն իրականացնող ՀԿ–ների ներկայացուցիչների միջև: Քննարկման արդյունքները հիմք են հանդիսացել հարթակի համար նախատեսված բովանդակության մշակման համար: Ըստ **Հասարակական մշտադիտարկման զեկույցի՝** բարեվարքության թեմայով մոդուլները ներկայում վերանայվում են: Մասնավորապես, առկա են երեք տարբեր մոդուլներ, և ներկայում իրականացվում են վերանայման աշխատանքներ, որի արդյունքում երեք մոդուլները կմիացվեն: Այս գործողության մասով **մտահոգիչ են սահմանված վերստուգիչ ցուցանիշները**, որոնք ամբողջական չեն և հնարավորություն չեն տալիս գնահատել գործողությունների իրականացման կատարողականը, բացահայտել քանակականացված արդյունքները: Ըստ այդմ, քանակական գնահատումների արդյունքներով գործողությունը **կատարված է,** իսկ որակական արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **իրականացված է (համապատասխանում է խնդրի (արդյունքի) նպատակին):**

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 42. Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում: Ըստ եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** Ըստ **Հասարակական մշտադիտարկման զեկույցի՝** գործարկվել է թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգը և քաղծառայության տեղեկատվական համակարգը, այժմ թափուր պաշտոնների համալրման մրցույթներն օնլայն հեռարձակման համակարգի հետ համատեղ անցկացվում են քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի միջոցով: Ըստ այդմ, քանակական գնահատումների արդյունքներով գործողությունը **կատարված է,** իսկ որակական արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **իրականացված է:**

Այսպիսով, ըստ Եզրափակիչ զեկույցի և Հասարակական մշտադիտարկման զեկույցի գնահատման արդյունքները ներկայացված են ամփոփ՝ ստորև աղյուսակով:

Հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման միջոցառումներ	Եզրափակիչ զեկույցի քանակական արդյունքները	Հասարակական մշտադիտարկման զեկույցի արդյունքները[<?>]	
		քանակական գնահատում	որակական գնահատում
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 37. Հանրային իրազեկման արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում	Կատարվել է ամբողջությամբ	Կատարված է մասնակի	Իրականացված է ոչ ամբողջական
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 38. «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում	Կատարվել է ամբողջությամբ	Կատարված է մասնակի	Իրականացված է ոչ ամբողջական
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 39. Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում	Կատարված է մասնակի	Կատարված է մասնակի	Իրականացված է ոչ ամբողջական
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 40. Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության թեմայով	Կատարվել է ամբողջությամբ	Կատարված է մեծամասամբ	Իրականացված է ոչ ամբողջական
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 41. Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում	Կատարվել է ամբողջությամբ	Կատարված է	Իրականացված է
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 42. Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում:	Կատարվել է ամբողջությամբ	Կատարված է	Իրականացված է

Բացի վերոգրյալից, հարկ է նաև նշել, որ առկա են որոշակի խնդիրներ Չորրորդ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների գնահատման նպատակով սահմանած **վերստուգիչ ցուցիչների** մասով: Ըստ այդմ՝ ցուցիչների համար բացակայում են տվյալների հավաքագրման և/կամ հաշվարկի մեթոդաբա-

<?> Հասարակական մշտադիտարկման արդյունքները ներկանացված են 2022 թվականի միջոցառումների կատարողականի հիման վրա:

նությունները, իսկ որոշ ցուցիչների դեպքում հստակ չէ՝ թե՞ ինչպես են դրանք նկարագրում իրավիճակը: Որոշ դեպքերում բացակայում է կապը միջոցառման ակնկալվող արդյունքի և գնահատող ցուցիչի միջև: ԱՆ–ի կողմից կիրառվող միջոցառումների ամենամյա ակնկալվող արդյունքների «կատարված է ամբողջությամբ», «կատարված է մեծամասամբ», «կատարված է մասնակիորեն», «կատարված չէ» գնահատականները տրվում են խիստ հայեցողական գնահատման եղանակով և չունեն կատարման աստիճանը բնութագրող չափորոշիչներ:

1.3. Հակակոռուպցիոն կրթության իրականացման փորձը ՀՀ–ում ըստ ՔՀԿ–ների և ուսումնական հաստատությունների պրակտիկայի

Արդարադատության ակադեմիա

Արդարադատության ակադեմիան հիմնադրվել է 2013թ.–ի մայիսի 2–ին «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի հիման վրա: Ակադեմիան կազմակերպում և անցկացնում է որակավորման ստուգման արդյունքներով դատավորների թեկնածուների հավակնորդների, քննիչների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը, դատավորների, քննիչների դատախազների, դատավորների թեկնածուների ցուցակում գտնվող անձանց վերապատրաստումը[<?>]: Ակադեմիայի կողմից դատավորների, քննիչների և դատախազների վերապատրաստման ծրագրերը ընդգրկում են հակակոռուպցիոն և բարեվարքության թեմաներով ուսուցումներ[<?>]:

Հանրակրթական դպրոցների «Հասարակագիտություն» առարկա

Չորրորդ հակակոռուպցոին ռազմավարության շրջանակներում հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների բովանդակությունը փոփոխվել է, ավագ դպրոցների աշակերտների դասագրքերում ներառվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսուցողական նյութեր, սակայն այդ նյութերի ուսուցանումն իրականացվել է միայն Տավուշի մարզի շուրջ 80 հանրակրթական ՈՒՀ–ներում: Նախատեսվում է այս պրակտիկան շարունակել Երևանում և ՀՀ մարզերի այլ դպրոցներում:

[<?>] Արդարադատության ակադեմիայի գործունեության այլ մանրամասները հասանելի են այստեղ. https://www.justiceacademy.am/#8

[<?>] Տես Ուսուցման ծրագրերը, https://www.justiceacademy.am/#1616

Հայաստանի Ամերիկյան Համալսարան

Համալսարանի իրավագիտության մագիստրոսական ծրագրում երկար տարիներ է, որ ներդրված է «Հակակոռուպցիոն համապատասխանության» դասընթացը, որը մեկ կրեդիտ ունեցող առարկա է (տևողությունը՝ 4 շաբաթ) և համարվում է ոչ պարտադիր (ընտրովի)[<?>]:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Ակադեմիայի իրավագիտության մագիստրոսական ծրագրում ներդրված է «Հանրային ծառայության համակարգը», որը չորս կրեդիտ ունեցող առարկա է, դասավանդվում է 1–ին կիսամյակում, և համարվում է պարտադիր[<?>]: Հանրային ծառայության համակարգի կարևոր մաս է կազմում նաև բարեվարքության համակարգը, պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման համակարգը, հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, այդ թվում՝ շահերի բախումը, անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները, որոնք հանդիսանում են կոռուպցիայի կանխարգելման գործիքներ:

Ուսումնասիրվել նաև **Երևանի պետական համալսարանի**[<?>], **Հայ–ռուսական սլավոնական համալսարանի**[<?>] **և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի**[<?>] կայքէջերը : Ըստ այդմ՝

[<?>] Տես Հայաստանի Ամերիկյան Համալսարան իրավագիտության մագիստրոսական ծրագրի 2022 թվականի աշնանային ծրագիրը, https://law.aua.am/files/2022/09/Fall–2022–schedule.pdf

[<?>] Տես Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության մագիստրոսական ծրագիրը, https://paara.am/wp–content/uploads/2014/10/US.PLAN–irav–2021–2022–Arka–ARM.pdf

[<?>] https://ysu.am/educational–programs

[<?>] https://rau.am/am/file–content/us–plan

[<?>] https://isec.am/master.html

ԵՊՀ–ի կայքում կրթական ծրագրերի ուսումնական պլանները տեղադրված չեն, Հայ–ռուսական սլավոնական համալսարանի դեպքում ընտրությամբ ուսումնասիրվել են իրավագիտության[<?>], միջազգային հարաբերությունների[<?>] և քաղաքագիտության[<?>] ծրագրերի ուսումնական պլանները, որտեղ հակակոռուպցիոն և բարեվարքության թեմաներով առարկաներ ներդրված չեն: ՀՀ ԳԱԱ–ի գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության մագիստրոսական ծրագրում ներդրված է «Քաղաքացիական ծառայության իրավական կարգավորումը ՀՀ–ում» առարկան[<?>]:

Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոց, ԻՀԱ

Դպրոցը հիմնադրվել է 2012 թ.–ին: Այն առաջին հակակոռուպցիոն մասնագիտական կրթական նախաձեռնությունն է, որի նպատակն է բարելավել հակակոռուպցիոն միջավայրն ու մշակույթը ՀՀ–ում՝ տարածելով բարեխղճության սկզբունքները և հակակոռուպցիոն գիտելիքները, ինչպես նաև հնարավորություն տալ նոր ու երիտասարդ կադրերին ստեղծել իրենց կարիերան ոլորտի պետական մարմիններում և լավագույն կազմակերպություններում: Դպրոցում ուսուցումը իրականացվում է 5 փուլով. առցանց ուսուցման փուլ, խորացված ուսուցման փուլ, պրակտիկ հմտությունների զարգացման փուլ, հանրային իրազեկման փուլ և եզրափակիչ փուլ[38]: ԻՀԱ–ն մշակել է նաև դպրոցի առցանց կրթական էլեկտրոնային հարթակ[39]:

<?> Տես Հայ–ռուսական սլավոնական համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի իրավագիտության ծրագրի ուսումնական պլանը, https://rau.am/uploads/pdf/files/Ucheb_plan_Yur_b_och_armYRhlzaoj6EFuRwc1619516095.pdf, https://ilp.rau.am/uploadsinstitute/timetable/ files/_%D0%B1%D0%B0%D0%BA_%D1%8E%D1%80%D0%B8%D1%81%D1%82%D1%8Bg8hYaL9EicsbINt1675663834.pdf

<?> Տես Հայ–ռուսական սլավոնական համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի միջազգային հարաբերություններ ծրագրի ուսումնական պլանը, https://rau.am/uploads/pdf/files/Ucheb_Plan_MO_b_zaoch_armdqaU9NQdQ0BL0al1619516452.pdf

<?> Տես Հայ–ռուսական սլավոնական համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քաղաքագիտության ծրագրի ուսումնական պլանը, https://ilp.rau.am/uploads/institute/timetable/files/_%D0%9F_%D0%91%D0%B0%D0%BA_2%D1%81%D0%B5%D0%BC_2022–2023%20(4)1tuMILfa9RNXOFU1680183597.pdf

<?> Տես ՀՀ ԳԱԱ–ի գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանը, https://www.isec.am/images/2023/dasacucak_arka/1/Irav_A_I_II_Kis.pdf

38 Տես Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի ընդունելության վերջին հայտարարությունը, https://armla.am/49765.html

39 Տես Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի առցանց կրթական էլեկտրոնային հարթակը, https://elearning.armla.am/

II. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

1. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Շահերի բախման կարգավորումների միջազգային առաջավոր ստանդարտների անկյունաքարային փաստաթղթերից է ՏՀԶԿ–ի կողմից մշակված «Հանրային ծառայողների շահերի բախման կառավարման ուղեցույց»–ը:[40] Համաձայն ուղեցույցի՝ անհրաժեշտ է տարբերակել փաստացի, պոտենցիալ և թվացյալ շահերի բախման իրավիճակները: **«Փաստացի շահերի բախումը»** սահմանվում է, որպես պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունների և մասնավոր շահերի միջև բախում, որում պաշտոնատար անձն ունի մասնավոր կարգավիճակից բխող շահեր, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ անձի պաշտոնեական պարտականությունների և գործառույթների վրա (կետ 10): Մեկ այլ ոլորտային կարևորագույն փաստաթուղթ է ԵԽ–ի «Հանրային պաշտոնյաների վարքագծի տիպային կանոնագրքի մեկնաբանություններ և կիրառում» փաստաթուղթը, որով սահմանված է, որ շահերի բախումն առաջանում է այնպիսի իրավիճակում, երբ պետական պաշտոնյան ունի մասնավոր շահ, որն ազդում է կամ կարող է ազդել կամ թվում է թե ազդեցություն է գործում իր պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա (հավելված 2, հոդված 13):[41]

«Թվացյալ շահերի բախումը» սահմանվում է որպես իրավիճակ, երբ առաջանում է կարծիք, որ պաշտոնատար անձի մասնավոր շահերը կարող են ոչ իրավաչափ կերպով ազդել վերջինիս պարտականությունների իրակա-

40 Տես ՏՀԶԿ, «Հանրային ծառայողների շահերի բախման կառավարման ուղեցույց», 2007, https://read.oecdilibrary.org/governance/managing–conflict–of–interest–in–the–public–sector_9789264018242–en#page33

41 Տես ԵԽ, Նախարարների կոմիտե, «Հանձնարարական No. R (2000) Անդամ երկրներին Հանրային պաշտոնյաների վարքագծի կանոնագրքերի վերաբերյալ». Հավելված 10. «Հանրային պաշտոնյաների վարքագծի տիպային կանոնագրքի մեկնաբանություններ և կիրառում», https://rm.coe.int/16805e2e52

նացման վրա, սակայն իրականության մեջ դա այդպես չէ, իսկ **«պոտենցիալ շահերի բախումը»**՝ մի իրավիճակ է, երբ պաշտոնատար անձի ունեցած մասնավոր շահերը ապագայում որոշակի հանգամանքների փոփոխության արդյունքում կարող են ազդեցություն ունենալ վերջինիս պաշտոնական գործունեության վրա (կետ 12):

«Մասնավոր շահերը» սահմանափակված չեն միայն ֆինանսական կամ դրամային շահերով, կամ այն շահերով, որոնք պաշտոնատար անձին տալիս են անմիջական անձնական շահ: Շահերի բախումը կարող է կապված լինել այդ պաշտոնատար անձի՝ որպես մասնավոր անձի՝ այլ իրավիճակներում իրավաչափ համարվող գործողությունների հետ, նրա պատկանելիությանը այլ կազմակերպություններին կամ դրանց հետ կապերին, ընտանեկան շահերին, եթե այդ շահերը կարող են ողջամտորեն դիտարկվել որպես անձի պաշտոնական պարտականությունների իրականացման վրա անպատշաճ ազդեցություն ունեցող» (կետ 14):

Միջազգային ստանդարտներով տարբերակվում են բուն իրավիճակային (ad hoc) շահերի բախման կանխարգելման և կառավարման կառուցակարգեր, ինչպես նաև շահերի բախմանն առնչվող այլ սահմանափակումներ՝ նվերների ընդունման սահմանափակումները, անհամատեղելիության պահանջները, մասնավորապես՝ ՏՀԶԿ–ի կողմից շեշտադրվում է սեփականության իրավունքից հրաժարվելու պահանջը՝ մասնագիտացված կառույցներին հավատարմագրային կառավարման հանձնելու եղանակով, և հետաշխատանքային սահմանափակումները, որի նպատակն է կանխել «պտտվող դռների» (revolving door) կոռուպցիոն սխեմաներում հայտնվելու իրավիճակները: Ըստ այդմ, ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ պիլոտային փուլի կապակցությամբ սահմանվել են շահերի բախման կառավարման հետևյալ ցուցիշներն ու հենանիշները՝

ՑՈՒՑԻՉ 1. Գործում է շահերի բախման կառավարման արդյունավետ իրավական շրջանակ.

- *Հենանիշ 1.1. Օրենսդրությունը տարածվում է և ներառում է հանրային ծառայողների նկատմամբ կիրառվող հետևյալ հասկացությունների սահմանումը՝ միջազգային չափանիշներին համապատասխան՝*
  - Փաստացի և պոտենցիալ շահերի բախում:
  - Մասնավոր շահեր, որոնք ներառում են ցանկացած նյութական և ոչ նյութական առավելություն պաշտոնատար անձի, նրա ընտանիքի, մերձավոր ազգականների, ընկերների, այլ անձանց կամ կազմակերպությունների համար, որոնց հետ վերջինս ունի անձնական, քաղաքական կամ այլ կապեր:
  - Թվացյալ շահերի բախում:
- *Հենանիշ 1.2. Օրենսդրությունը վերապահում է հետևյալ դերերն ու պարտավորությունները՝ իրավիճակային (ad hoc) շահերի բախումը կանխելու և կառավարելու համար՝*
  - Հանրային ծառայողի պարտականությունը՝ զեկուցել շահերի բախման մասին, որն ի հայտ է եկել կամ կարող է ի հայտ գալ:
  - Հանրային ծառայողի պարտականությունը՝ ձեռնպահ մնալ որոշումներ կայացնելուց մինչև շահերի բախման լուծումը:
  - Կառավարիչների և հատուկ մարմինների/միավորների պարտականությունը՝ լուծել հաղորդված կամ այլ միջոցներով հայտնաբերված շահերի բախումը:
- *Հենանիշ 1.3. Օրենսդրությունը նախատեսում է իրավիճակային (ad hoc) շահերի բախման լուծման հետևյալ մեթոդները՝*
  - Հանրային ծառայողի կողմից ակտիվների հետ կապված շահերից հրաժարում կամ դրանց լուծարում:

- Հանրային ծառայողի հրաժարականը շահերի բախման խնդրո առարկա մասնավոր պաշտոնից կամ գործառույթից կամ մասնավոր շահի վերացում այլ եղանակով:
- Հանրային ծառայողի՝ շահերի բախման խնդրո առարկա որոշումների կայացման գործընթացում ներգրավման բացառում:
- Հանրային ծառայողի՝ շահերի բախման խնդրո առարկային առնչվող որոշակի տեղեկատվության հասանելիության սահմանափակում:
- Հանրային ծառայողի տեղափոխությունն այլ՝ շահերի բախման խնդրո առարկային չառնչվող պաշտոնում:
- Հանրային ծառայողի պարտականությունների և գործառույթների վերանայումը:
- Հանրային ծառայողի կողմից պարտականությունների իրականացում արտաքին վերահսկողության ներքո:
- Հանրային ծառայողի հրաժարականը/հեռացումը իրենց պետական պաշտոնից:

▪ *Հենանիշ 1.4. Օրենսդրությունը նախատեսում է իրավիճակային (ad hoc) շահերի բախման լուծման հետևյալ մեթոդները.*

- Կոլեգիալ (կոլեկտիվ) պետական մարմիններում շահերի բախման լուծման հատուկ մեթոդներ:
- Անմիջական ղեկավարներ չունեցող բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար շահերի բախման լուծման հատուկ մեթոդներ:

▪ *Հենանիշ 1.5. Առկա են շահերի բախման հատուկ կանոնակարգեր կամ պաշտոնական ուղեցույցներ հետևյալ թիրախ խմբերի համար՝*

- *Դատավորներ:*
- *Դատախազներ:*
- *Խորհրդարանի անդամներ:*
- *Կառավարության անդամներ:*
- *Տեղական և տարածքային ներկայացուցչական մարմինների անդամներ:*

ՑՈՒՑԻՉ 2. Շահերի բախման կանոնակարգերը պատշաճ կերպով կիրարկվում են.

▪ *Հենանիշ 2.1. Հանրային ծառայողների նկատմամբ կանոնավոր կերպով կիրառվում են պատասխանատվության միջոցներ հետևյալ իրավախախտումների համար.*

- Իրավիճակային (ad hoc) շահերի բախման մասին չհայտնելը:
- Իրավիճակային (ad hoc) շահերի բախումը չլուծելը:
- Նվերների կամ հյուրընկալության հետ կապված սահմանափակումները խախտելը:
- Անհամատեղելիության պահանջները խախտելը:
- Հետաշխատանքային սահմանափակումները խախտելը:

▪ *Հենանիշ 2.2. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կանոնավոր կերպով կիրառվում են պատասխանատվության միջոցներ հետևյալ իրավախախտումների համար.*

- Իրավիճակային (ad hoc) շահերի բախման կանխարգելման և լուծման մասին օրենսդրության խախտում:
- Նվերների կամ հյուրընկալության հետ կապված սահմանափակումների խախտում:
- Անհամատեղելիության պահանջների խախտում:
- Առևտրային կազմակերպությունների կամ այլ բիզնես շահերի սեփականության իրավունքից հրաժարվելու պահանջների հետ կապված խախտումներ:
- Հետաշխատանքային սահմանափակումների խախտում[42]:

42 Տես ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ պիլոտային փուլի 2022 թվականի զեկույցը, https://www.oecd-ilibrary.org/governance/anti-corruption-reforms-in-armenia_e56cafa9-en;jsessionid=XybFlBzfg3WExBEF9qWjoToWWhJU6in76Tz5i2uG.ip-10-240-5-111

2. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐ

2.1. Շահերի բախման կարգավորումների ներպետական օրենսդրության համառոտ նկարագիրը

ՑՈՒՑԻՉ 1. Գործում է շահերի բախման կառավարման արդյունավետ իրավական շրջանակ.

Ա. Իրավիճակային (ad hoc) շահերի բախման կանխարգելում և կառավարում

Հենանիշ 1.1. Սահմանում:

2022 թվականի դեկտեմբերի 7–ի օրենսդրական փոփոխությունների արդյունքում կատարելագործվել են «ՀԾՄ» օրենքով[43] նախատեսված շահերի բախման սահմանման վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, որի արդյունքում՝

- որպես շահերի բախման դրսևորում՝ օրենսդրական մակարդակով ամրագրվել է *«պոտենցիալ շահերի բախման»* իրավիճակը (Հոդված 33.1),
- տրվել են *«մասնավոր շահ», «գործարար և քաղաքական հարաբերություններ»* հասկացությունները (Հոդված 33.2),
- վերանայվել է *«թվացյալ շահերի բախման»* կարգավորումը (Հոդված 33.3),
- ընդլայնվել է *«փոխկապակցված անձանց»* շրջանակը՝ ներառելով, ի թիվս այլոց, պաշտոն զբաղեցնող անձի հետ ազգակցական և ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձանց, այդ թվում՝ համատեղ բնակվող անձինք, փաստացի խնամքի տակ գտնվող անձինք, ընդհանուր տնտեսական շահ ունեցող անձինք, ինչպես նաև փոխկապակցված կազմակերպություններին (Հոդված 33.11):

43 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 23.03.2018թ.–ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175828

Միևնույն ժամանակ, շահերի բախման իրավիճակների գնահատման ժամանակ կարևոր նշանակություն ունեն նաև *«հանրային պաշտոնատար անձ»* և *«հանրային ծառայող»* եզրույթների սահմանումները, որոնց վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողները դուրս են մնում շահերի բախման օրենսդրական կարգավորումներից:

Հենանիշ 1.2. Շահերի բախման կանխման և կառավարման դերեր և պարտավորություններ

Հստակեցված են պաշտոն զբաղեցնող անձանց, նրանց վերադասերի և անմիջական ղեկավարների, էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների՝ շահերի բախման կանխման և կառավարման դերերը և պարտավորությունները, սահմանափակվել է անհարկի հայեցողության դրսևորման հնարավորությունը, մասնավորապես՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոնատար անձանց կողմից (Հոդվածներ 33.4; 33.5; 33.8, 45, 46):

Հենանիշներ 1.3; 1.4: Շահերի բախման լուծման մեթոդներ:

Սահմանված է շահերի բախման լուծման մեթոդների լայն գործիքակազմ, որը ներառում է պաշտոն զբաղեցնող անձի՝ որոշակի տեղեկատվության հասանելիության սահմանափակումը, տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը պաշտոն զբաղեցնող այլ անձի հանձնարարումը, պաշտոն զբաղեցնող անձի համաձայնությամբ շահերի բախումը վերացնելու համար ժամկետի սահմանումը, տվյալ դեպքում պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների և հայեցողության շրջանակի սահմանափակումը, կոլեգիալ մարմիններում որոշում կայացնելուց ձեռնպահ մնալը և այլն (Հոդված 33.6):

Հենանիշ 1.5. Շահերի բախման հատուկ կանոնակարգեր/պաշտոնական ուղեցույցներ հետևյալ թիրախ խմբերի համար.

- *Դատավորներ:* Դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի վրա տարածվում են «ՀԾՄ» օրենքով նախատեսված՝ շահերի բախման սահմանմանը վերաբերող ընդհանուր դրույթները (Հոդված 33.12): Դատավորների շահերի բախման առանձնահատուկ օրենսդրական կարգավորումները տրված են «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, որոնք, ի թիվս այլոց, չեն անդրադառնում դատավորի դատական գործունեությունից դուրս առկա շահերի կարգավորման հարցին կամ չեն պարունակում շահերի բախման՝ ոլորտային առանձնահատկությունները հաշվի առնող հատուկ սահմանում(Հոդված 70.2):[44]
- *Դատախազներ:* Դատախազի շահերի բախման օրենսդրական կարգավորումները տրված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքում, որոնք, թեև անդրադառնում են դատախազի պաշտոնական գործունեությունից դուրս առկա շահերի կարգավորման հարցին, սակայն չեն պարունակում շահերի բախման՝ ոլորտային առանձնահատկությունները հաշվի առնող հատուկ սահմանում՝ հղում կատարելով «ՀԾՀ» օրենքով նախատեսված ընդհանուր կարգավորմանը (Հոդվածներ 72–74):[45]
- *Խորհրդարանի անդամներ:* ԱԺ պատգամավորների շահերի բախման օրենսդրական կարգավորումները տրված են «ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքով, սակայն չեն վերանայվել «ՀԾՄ» օրենքով տրված շահերի բախման նոր սահմանման լույսի ներքո (Հոդված 4):[46]
- *Կառավարության անդամներ:* Հատուկ կանոնակարգեր նախատեսված չեն, վերջիններիս վրա տարածվում են «ՀԾՄ» օրենքով նախատեսված շահերի բախման կարգավորումները, որոնք մշակվել են նաև հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց գործունեության առանձնահատկությունների հաշվառմամբ (Հոդված 33):
- *Տեղական և տարածքային ներկայացուցչական մարմինների անդամներ:* «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում շահերի բախման առանձնահատուկ կարգավորումներ նախատեսված չեն, միայն՝ համայնքի ավագանու մասով մեկ կարգավորում (Հոդված 21.1[47], իսկ համայնքի ղեկավարի, նրա տեղակալի, Երևան վարչական շրջանի ղեկավարի, նրա տեղակալի վրա տարածվում են «ՀԾՄ» օրենքով նախատեսված շահերի բախման կարգավորումները:

44 «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, ընդունված՝ 07.02.2018, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176080

45 «Դատախազության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 17.11.2017, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175832

46 «Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 16.12.2016, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172253

Ըստ այդմ, ՀՀ հանրային ծառայության առանձին ոլորտների օրենսդրական ակտերի վերլուծությունը, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շահերի բախման համընդհանուր կարգավորումը մեկ օրենսդրական ակտի շրջանակներում բացակայում է, իսկ շահերի բախման նոր սահմանումից բխող՝ դատավորների, դատախազների, ԱԺ պատգամավորների, համայնքի ավագանու անդամների, ինչպես նաև հանրային ծառայության առանձին ոլորտների առանձնահատկություններով պայմանավորված կարգավորումները բավարար չափով կանոնակարգված չեն համապատասխան ոլորտային օրենքներով:

Բ.Շահերի բախմանն առնչվող այլ սահմանափակումներ

Հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությունը «շահերի բախում» եզրույթը դիտարկում է կոնկրետ «ՀԾՄ» օրենքի 33–րդ հոդվածի համատեքստում (բուն իրավիճակային (ad hoc) շահերի բախում), իսկ շահերի բախմանն առնչվող սահմանափակումները՝ նվերներ ընդունելու սահմանափակումները, անհամատեղելիության պահանջները և այլ սահմանափակումները օրենքով ներկայացվում են որպես առանձին տեսակներ և չեն որակվում որպես շահերի բախման կոնկրետ դեպքեր: Միևնույն ժամանակ, սույն վերլուծության առարկան ներառում

47 «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 07.05.2002, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176442

է «շահերի բախում» հասկացության լայն մեկնաբանումը՝ համապատասխան միջազգային, այդ թվում՝ ՏՀԶԿ ստանդարտների:

Նվերներ ընդունելու սահմանափակումները:
«ՀԾՄ» օրենքով սահմանված են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու սահմանափակումները (Հոդված 29): Օրենսդրական փոփոխությունների արդյունքում նախատեսվել են նաև նվերների հաշվառմանն ու հանձնմանն առնչվող կարգավորումներ (Հոդված 30): Միևնույն ժամանակ, նվերների ռեեստրի վարման կարգը և օրենսդրությունը կիրարկող այլ ենթաօրենսդրական ակտերը դեռևս մշակված չեն: Դրանք նախատեսվում էր մշակել մինչև 2023 թ.–ի ավարտը, սակայն ԿԿՀ–ն վերջերս հայտնել է, որ «ՀԾՄ» օրենքով սահմանված ենթաօրենսդրական ակտերի նախագծման աշխատանքների ընթացքում ի հայտ են եկել մի շարք օրենսդրական բացեր, որոնք հնարավորություն չեն տալիս ավարտին հասցնել ենթաօրենսդրական ակտերի մշակումը, հետևաբար նաև՝ օրենքի պատշաճ կիրարկումը:[48]

Անհամատեղելիության պահանջներ, այդ թվում՝ սեփականության իրավունքից հրաժարվելու պահանջ:
«ՀԾՄ» օրենքով սահմանված են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները, այդ թվում՝ «Առևտրային կազմակերպությունում որևէ պաշտոնի զբաղեցման» և «Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու» անհամատեղելիության պահանջները (Հոդված 31): Օրենսդրական փոփոխությունների արդյունքում որոշակիորեն կարգավորվել են նշված անհամատեղելիության պահանջներին, ըստ այդմ՝ հավատարմագրային կառավարմանն առնչվող օրենսդրական կարգավորումները, ըստ որի վերացվել է «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով առկա բացառությունը, որի արդյունքում առևտրային կազմակերպության մասնաբաժնի կառավարումը կարող է իրականացվել միայն լիցենզավորված կազմակերպության կողմից, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հավատարմագրային կառավարման գործունեությունը դարձվել է ծանուցվող գործունեություն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի կառավարման գրանցումը դարձել է պարտադիր և սահմանվել է հստակ ժամկետ, որի ընթացքում պաշտոնյան պարտավոր կլինի պաշտոնավարման ընթացքում ձեռք բերված մասնակցությունը հանձնել հավատարմագրային կառավարման: Միևնույն ժամանակ, օրենսդրական կարգավորումները շարունակում են թերի մնալ, օրինակ՝ օրենքի այն կարգավորումը, որի համաձայն հավատարմագրային կառավարիչներ կարող են լինել ինչպես կազմակերպություններ, այնպես էլ՝ անհատ ձեռնարկատերեր, ինչը չի բխում բաժնեմասնակցությունը ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ հավատարմագրային կառավարման ընկերություններին հանձնելու պահանջի էությունից: Բացի այդ, բացակայում է նշյալ օրենքի կիրարկման ենթաօրենսդրությունը, մասնավորապես՝ առկա չէ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստր և վարման կարգ, որի արդյունքում հնարավոր կլինի կիրարկել կարգավորումները և տիրապետել վիճակագրության առ այն, թե որքա՞ն մասնագիտացված ընկերություններ են տրամադրում հավատարմագրային կառավարման նշյալ ծառայությունը, և որքա՞ն դեպք է գրանցվել, երբ պաշտոնատար անձինք առևտրային կազմակերպության իրենց բաժնեմասնակցությունը հանձնել են հավատարմագրային կառավարման:

Այլ սահմանափակումներ, այդ թվում՝ հետաշխատանքային սահմանափակումներ:
«ՀԾՄ» օրենքով սահմանված են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումներ (Հոդված 32): Նշյալ հիմքերից որոշները, թեև «ՀԾՄ» օրենքով հանդիանում

48 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, «Նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ փոփոխությունների կիրառման ապահովման մասին», http://cpcarmenia.am/hy/news/item/2023/05/07/2023–05–07/

են առանձին կարգավորման առարկա, ըստ էության, իրավիճակային շահերի բախման դեպքեր են Պաշտոնից ազատվելուց հետո հետագա աշխատանքային գործունեության սահմանափակման էությունը կայանում է նրանում, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում: Միևնույն ժամանակ, բացի այս ընդհանուր կարգավորումից, օրենքով այս կարգավորման հետ կապված այլ կանոնակարգումներ տրված չեն, սահմանափակումը խիստ ընդհանրական է և հաշվի չի առնում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների առանձին խմբերի գործունեության ոլորտների առանձնահատկությունները, ինչպես նաև սահմանված չեն վերջինիս կիրառման պայմանները, որոշում կայացնողների շրջանակ և պահպանման նկատմամբ արդյունավետ վերահսկողական մեխանիզմներ:

ՑՈՒՑԻՉ 2. Շահերի բախման կանոնակարգերը պատշաճ կերպով կիրարկվում են

Իրավիճակային շահերի բախում: Շահերի բախման խախտումների համար նախատեսված է վարչական կամ կարգապահական պատասխանատվություն: Միևնույն ժամանակ, կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, իսկ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում (Հոդված 33.10): Օրենսդրական փոփոխությունների արդյունքում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» ներդրվել են վարչական պատասխանատվության միջոցներ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման վերաբերյալ կարգավորումների խախտման համար՝ (Հոդված 169[31]):[49] Միևնույն ժամանակ, հստակ կերպով սահմանված չեն կարգապահական և վարչական պատասխանատվության միջոցներ վերադաս կամ անմիջական ղեկավար հանդիսացող, ինչպես նաև առհասարակ բարեվարքության հարցերով պատասխանատու այլ պաշտոնատար անձանց կողմից իրավիճակային շահերի բախման պայմանների պահպանման կանոնների խախտման վերաբերյալ իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման համար:

Նվերների ընդունման սահմանափակումներ: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» ներդրվել են պատասխանատվության միջոցներ նվերներ ընդունելու կամ հաշվառելու սահմանված կարգի խախտման համար (Հոդված 166[1]): Միևնույն ժամանակ, հստակ կերպով սահմանված չեն կարգապահական և վարչական պատասխանատվության միջոցներ վերադաս կամ անմիջական ղեկավար հանդիսացող, ինչպես նաև առհասարակ բարեվարքության հարցերով պատասխանատու այլ պաշտոնատար անձանց կողմից նվերների ընդունման սահմանափակումների պահպանման կանոնների խախտման վերաբերյալ իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման համար:

Անհամատեղելիության պահանջներ: Անհամատեղելիության պահանջների խախտման համար հետևանքները սահմանված են «ՀԾՄ» օրենքով՝ որպես կարգապահական պատասխանատվություն, այն է՝ որպես լիազորությունների դադարեցման կամ զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք (Հոդված 31.17): Միևնույն ժամանակ, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս պարագայումս ևս անհրաժեշտ է ցուցաբերել համահունչ մոտեցում և նախատեսել վարչական, մասնավորապես՝ նյութական պատասխանատվություն, որն ավելի արդյունավետ է իր նպատակին ծառայելու տեսանկյունից: Բացի այդ, հստակ կերպով սահմանված չեն պատասխանատվության միջոցներ վերադաս կամ անմիջական ղեկավար հանդիսացող, ինչպես նաև առհասարակ բարեվարքության հարցերով պատասխանատու այլ պաշտոնատար

49 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, ընդունված՝ 06.12.1985, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176731

անձանց կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման կանոնների խախտման վերաբերյալ իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման համար:

Այլ սահմանափակումներ: Այլ սահմանափակումների չպահպանման համար «ՀԾՄ» օրենքը նախատեսում է կարգապահական պատասխանատվություն՝ առանց սահմանելու հստակ սանկցիաներ (Հոդված 32.3): Միևնույն ժամանակ, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս պարագայումս ևս անհրաժեշտ է ցուցաբերել համահունչ մոտեցում և նախատեսել վարչական, մասնավորապես՝ նյութական պատասխանատվություն, որն ավելի արդյունավետ է իր նպատակին ծառայելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ, հստակ կերպով սահմանված չեն պատասխանատվության միջոցներ վերադաս կամ անմիջական ղեկավար հանդիսացող, ինչպես նաև առհասարակ բարեվարքության հարցերով պատասխանատու այլ պաշտոնատար անձանց կողմից այլ սահմանափակումների պահպանման կանոնների խախտման վերաբերյալ իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման համար:

Գ.Շահերի բախումը պետական գնումներում

Շահերի բախման կանխարգելման տեսանկյունից առավել խոցելի ոլորտների շարքին են դասվում պետական գնումները, որով էլ պայմանավորված է սույն հարցին առանձնակի ուշադրության հատկացումը: Պետական գնումների ոլորտում շահերի բախման կարգավորումների նախատեսումը նպատակ է հետապնդում բացառել այնպիսի իրավիճակներ, երբ որևէ պետական պատվիրատուն կամ իր հետ փոխկապակցված անձինք հաղթեն տվյալ պատվիրատուի գնումներում:

Ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված են ոլորտային որոշակի սահմանափակումներ, այն է՝ անձը (ներկայացուցիչը) չի կարող մասնակցել գործընթացին, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր), վերջիններիս կամ իր հիմնադրած կամ բաժնեմասնակցությամբ (փայամասնակցությամբ) կազմակերպությունը: Անձը (ներկայացուցիչը) ստորագրում է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում (Հոդված 5.1.(2)): Միևնույն ժամանակ, սույն թվականի մարտի 1–ից արդեն իսկ գործում են իրական շահառուներին առնչվող օրենսդրական կարգավորումները, որի արդյունքում կիրառվող մեխանիզմները ևս հանդիսանում են փոխկապակցման և շահերի բախման բացահայտման գործիք:

Այս համատեքստում հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ շահերի բախման կանխարգելմանն ուղղված գործող կարգավորումները բավարար չեն իրապես սահմանափակելու պետական գնումների գործընթացների վրա պաշտոնատար անձանց կամ վերջիններիս հետ փոխկապակցված անձանց ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը, և ըստ այդմ՝ վերջիններիս դե ֆակտո մասնակցությունը: Սույն խնդրի մասին բարձրաձայնել է նաև ԿԿՀ–ն, որի հավաստմամբ, թեև վերջինս իր աշխատանքի երկու տարիների ընթացքում առնչվել է գնումների ոլորտում շահերի բախման հետ կապված մի շարք դեպքերի, որոնց մեծամասնությունը, սակայն, «Հանրային ծառայության մասին» օրենքի ներկա կարգավորումների շրջանակներում հնարավորություն չի ընձեռել Հանձնաժողովին հարուցելու համապատասխան վարույթ և ընթացք տալ նման իրավիճակներում ի հայտ եկած շահերի բախման դեպքերին:[50]

Հաջորդ խնդիրը կայանում է նրանում, որ բացակայում են գնումների մասնակիցների կողմից ներկայացված շահերի բախման բացակայության մասին հայտարարության և վերջիններիս իրական սեփականատերերի մասին տեղեկությունների ստուգման արդյունավետ մեխանիզմներ: Այս կապակցությամբ հատկանշական է, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ շահերի հայտարարագրման պարտականությունը ևս հանդիսանում է հայտարարատու անձանց և վերջիններիս փոխկապակցված անձանց իրական շահառու հանդիսանալու և շահերի բախման հնարավոր իրավիճակները բացահայտելու գործիք: Միևնույն ժամանակ, պետական գնումների ոլորտում

50 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ամփոփել է 2021 թվականը. անցնող տարին թվերով և առաջիկա անելիքները», 28.12.2021, http://cpcarmenia.am/hy/news/item/2021/12/28/1/

հայտարարատու անձանց ցանկը լիարժեք չէ, քանի որ մի շարք պաշտոնների համար սահմանված չէ շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն: Մասնավորապես, «պետական գնումների համար պատասխանատու պաշտոնատար անձ» եզրույթի միջազգային լավագույն ստանդարտների լույսի ներքո վերլուծությունը ցույց է տալիս, որ եզրույթը բավականին ընդգրկուն է, որը ներառում է պաշտոնյաներին, որոնք հանդիսանում են գնումների գնահատող հանձնաժողովի անդամ, գնումների բողոքարկման մարմնի անդամ կամ այլ եղանակով մասնակցում են գնումների ոլորտին առնչվող որոշումների կայացման գործընթացին: Մինչդեռ, ՀՀ–ում պետական գնումների համար պատասխանատու անձանցից հայտարարատու է միայն գլխավոր քարտուղարը: Սույն հարցը արծարծվել է ինչպես ՏՀԶԿ–ի կողմից, այնպես էլ նշվել է նաև որպես ՄԱԿ–ի «Կոռուպցիայի դեմ պայքարի» կոնվենցիայի (հոդված 9.1) պարտավորությունների կատարման մարտահրավեր ՄԱԿ–ի գնահատման շրջանակներում, որի կապակցությամբ ՀՀ–ին առաջարկվել է ջանքեր գործադրել գնումների անձնակազմին վերաբերող հարցերը կարգավորելու համար, օրինակ, շահերի հայտարարագիր պահանջել որոշակի պետական գնումների (օրինակ՝ ոչ մրցութային ընթացակարգով գնումների) ժամանակ:[51] Ոլորտային խնդիրներն ու մարտահրավերները ներառում են նաև իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցների համակարգի վերանայումը պետական գնումներում կոռուպցիայի և շահերի բախման կանխարգելման լույսի ներքո, օրինակ՝ պետական գնումներին մասնակցությունից զրկելը, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործություն կատարելու հիմքով անձանց պետական գնման ընթացակարգի մասնակցության իրավունքից զրկելու վերաբերյալ առանձին վիճակագրության նախատեսումը (վիճակագրություն չի վարվում պետական պաշտոնյաների կողմից պետական գնումների ոլորտում շահերի բախման կանոնների խախտման համար կիրառված սանկցիաների վերաբերյալ, ինչպես նաև պետական գնումների ոլորտում կոռուպցիոն հանցագործություններով վերջնական դատական ակտերի վերաբերյալ):

51 https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14–18June2021/CAC–COSP–IRG–II–3–1–ADD.3/V2102056_E.pdf

2.2. Շահերի բախման ներպետական իրավակիրառ պրակտիկայի հակիրճ նկարագիր

Ա. Իրավիճակային (ad hoc) շահերի բախման կանխարգելում և կառավարում:

2021 թվական: Հաշվետու տարվա ընթացքում ԿԿՀ–ին հասցեագրված դիմումներից 4–ը, իսկ ԿԿՀ–ի կողմից ուսումնասիրված մամուլի հրապարակումներից 13–ը վերաբերվել են իրավիճակային շահերի բախմանը, սակայն իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքերի հիմքով ԿԿՀ–ի կողմից վարույթների հարուցման վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:
2022 թվական: Հաշվետու տարվա ընթացքում ԿԿՀ–ին հասցեագրված դիմումներից 4–ը, իսկ ԿԿՀ–ի կողմից ուսումնասիրված մամուլի հրապարակումներից 3–ը վերաբերվել են իրավիճակային շահերի բախմանը: Իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքերի հիմքով ԿԿՀ–ի կողմից հարուցվել են թվով 2 վարույթներ՝ մարզպետի և համայնքի ղեկավարի նկատմամբ: Շիրակի մարզպետի նկատմամբ վարույթի հարուցման հիմք է հանդիսացել անձի՝ ԿԿՀ–ին հասցեագրված դիմումը, որով դիմումատուն հայտնել է, որ մարզպետը դրսևորել է կամայական վարքագիծ՝ իր հետ փոխկապակցված անձին՝ եղբորը նշանակելով պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի անդամ: Հաշվետու տարվա ընթացքում սույն վարույթը դեռևս գտնվել է քննության փուլում: Համայնքի ղեկավարի նկատմամբ վարույթի հարուցման հիմք է հանդիսացել լրատվամիջոցի հրապարակումը, որում տեղ գտած նյութում ներկայացվել են տվյալներ վերջինիս բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպության հետ (որի կառավարումը, ինչպես նաև բաժնեմասը հետագայում հանձնել էր վերջինիս կնոջը), նույն համայնքի կարիքների համար իրականացված գնումների գործընթացի արդյունքում 537 միլիոն ՀՀ դրամի չափով պայմանագիր կնքելու մասին: Սույն վարույթի կապակցությամբ ԿԿՀ–ի մոտ հիմնավոր կասկածներ առաջանալու հիմքով կասեցրել է վարույթը, իսկ վարույթի նյութերը ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազություն:

Բ. Շահերի բախմանն առնչվող այլ սահմանափակումներ

Նվերների ընդունման սահմանափակումներ:

2021 թվական: Հաշվետու տարվա ընթացքում ԿԿՀ–ին հասցեագրված՝ նվերների ընդունման արգելքին վերաբերող դիմումների և ԿԿՀ–ի կողմից ուսումնասիրված նվերների ընդունման արգելքին վերաբերող մամուլի հրապարակումների, ինչպես նաև նվերների ընդունման արգելքի հիմքով ԿԿՀ–ի կողմից վարույթների հարուցման վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ: *2022 թվական:* Հաշվետու տարվա ընթացքում ԿԿՀ–ին հասցեագրված դիմումներից 1–ը վերաբերվել է նվերների ընդունման արգելքին, իսկ ԿԿՀ–ի կողմից ուսումնասիրված նվերների ընդունման արգելքին վերաբերող մամուլի հրապարակումների, ինչպես նաև նվերների ընդունման արգելքի հիմքով ԿԿՀ–ի կողմից վարույթների հարուցման վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:[52]

Անհամատեղելիության պահանջներ:

2021 թվական: Հաշվետու տարվա ընթացքում ԿԿՀ–ին հասցեագրված դիմումներից 10–ը, իսկ ԿԿՀ–ի կողմից ուսումնասիրված մամուլի հրապարակումներից 2–ը վերաբերվել են անհամատեղելիության պահանջներին: Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով ԿԿՀ–ի կողմից հարուցվել են թվով 3 վարույթներ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի, մարզպետի և համայնքի ղեկավարի նկատմամբ, որոնցից խախտում է արձանագրվել դատավորի և համայնքի ղեկավարի կողմից: ԿԿՀ եզրակացության արդյունքում՝ ԲԴԽ–ի կողմից դատավորի լիազորությունները դադարեցվել են, իսկ համայնքի ղեկավարի լիազորությունները դադարել են վերջինիս լիազորությունների ժամկետը լրանալու հիմքով:

2022 թվական: Հաշվետու տարվա ընթացքում ԿԿՀ–ին հասցեագրված դիմումներից 33–ը, իսկ ԿԿՀ–ի կողմից ուսումնասիրված մամուլի հրապարակումներից 5–ը վերաբերվել են անհամատեղելիության պահանջներին: Բացի այդ, ԿԿՀ–ն իրականացրել է նաև սեփական նախաձեռնությամբ թվով 107 ուսումնասիրություն՝ պատգամավորների կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման վերաբերյալ: Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով ԿԿՀ–ի կողմից հարուցվել են թվով 9 վարույթներ ԱԺ պատգամավորների, մարզպետի տեղակալի, Երևանի քաղաքապետի տեղակալի, համայնքի ղեկավարի նկատմամբ: Համայնքի ղեկավարի նկատմամբ վարույթը հարուցվել էր նաև իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով: Սույն վարույթի կապակցությամբ, ինչպես վերը նշվեց, վարույթի նյութերը ներկայացվել են ՀՀ գլխավոր դատախազություն: Հաշվետու ժամանակաշրջանում եզրափակվել է մարզպետի տեղակալի նկատմամբ հարուցված վարույթը՝ այլ մարմնում իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելու արգելքի պահանջի չպահպանման հիմքով: Հաշվետու տարվա ընթացքում մյուս վարույթները դեռևս գտնվել են քննության փուլում, իսկ 2023 թվականին 6պատգամավորի նկատմամբ հարուցված վարույթի արդյունքում ընդունել է խախտման բացակայության վերաբերյալ եզրակացություն:

Այլ սահմանափակումներ:

2021 թվական: Հաշվետու տարվա ընթացքում ԿԿՀ–ին հասցեագրված դիմումներից 3–ը վերաբերվել են այլ սահմանափակումներին, իսկ ԿԿՀ–ի կողմից այլ սահամանփակումների վերաբերյալ մեդիա մոնիթորինգի արդյունքում հրապարակումներ դուրս չեն բերվել/չեն եղել: Ստացված դիմումների ուսումնասիրության արդյունքում վարույթի հիմքեր նույնպես չեն արձանագրվել և վարույթ չի հարուցվել:

2022 թվական: Հաշվետու տարվա ընթացքում ԿԿՀ–ին հասցեագրված դիմումներից 1–ը, իսկ ԿԿՀ–ի կողմից ուսումնասիրված մամուլի հրապարակումներից 2–ը վերաբերվել են այլ սահմանափակումներին: Նշված երեք գործերի առնչությամբ ևս վարույթ հարուցել հիմքեր առկա չեն եղել:[53]

52 Նշենք, որ մինչ «ՀԾՄ» օրենքի՝ 2023 թվականի հունվարի 2–ին ուժի մեջ մտած փոփոխությունները՝ ԿԿՀ–ն չուներ նվերներն ընդունելու սահմանափակման պահպանման նկատմամբ գործիքակազմ:

53 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, 2021 թվականի գործունեության մասին հաղորդում, 2022թ., հասանելի է՝ http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf ; 2022թ թվականի գործունեության մասին հաղորդում, 2023թ., հասանելի է՝ http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf;

2.3. Շահերի բախման ներպետական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի մշտադիտարկման արդյունքները

Ռազմավարության Միջոցառումների ծրագրով շահերի բախմանն է նվիրված է ծրագրի երկու գործողություն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 17: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, շահերի բախման իրավիճակների վերաբերյալ կարգավորումների հստակեցում: Համաձայն՝ ՀՀ ԱՆ–ի կողմից հրապարակված **եզրափակիչ զեկույցի՝** գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ,** 2022 թվականի դեկտեմբերի 7–ին Ազգային Ժողովի կողմից ընդունվել են «ՀԾՄ» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որի արդյունքում կատարելագործվել են շահերի բախման վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները, մասնավորապես՝ վերանայվել են շահերի բախման հասկացությունը, շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված գործիքների, շահերի բախման կարգավորումների դեպքում պատասխանատվության միջոցների շրջանակը, ինչպես նաև հստակեցվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները՝ արգելվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձին և հանրային ծառայողին փոխկապակցված անձի հետ կնքել առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիր: Բացի այդ, որպես բաժնի արդյունքային ցուցանիշ ռազմավարությամբ սահմանված է եղել՝ «ԿԿՀ–ի կողմից անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների (...) վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության տրամադրում, հիմքային՝ 2020թ.–35, 2022թ. ակնկալվող–50», սակայն 2022թ.–ին փաստացի տրամադրվել է՝ 42–ը: Ըստ **Հասարակական մշտադիտարկման զեկույցի**՝ ներդրված կարգավորումները շարունակում են թերի մնալ, ինչպես նաև բացակայում է նշյալ օրենքի կիրարկման ենթաօրենսդրությունը, մասնավորապես՝ առկա չէ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստր և վարման կարգ: Հատկանշական է, որ օրենքով նման կարգի նախատեսման պահանջ սահմանված չէ, սակայն առանց վերջինիս սահմանման օրենսդրական կարգավորումները չեն կարող պատշաճ կիրարկվել: Ըստ այդմ, քանակական գնահատումների արդյունքներով գործողությունը **կատարված** է, իսկ որակական արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) իրականացված է **ոչ ամբողջական** (ոչ համապատասխան է ամբողջական խնդրի (արդյունքի) նպատակին), քանի որ բիզնեսի և քաղաքականության տարանջատման հստակ սահմաններն ապահովված չեն օրենսդրության անկատարության և թերի վերստուգիչ ցուցանիշի արդյունքում օրենքը կիրարկող ենթաօրենսդրության բացակայության պատճառով:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 18: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում և դրա նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանում: **Ըստ եզրափակիչ զեկույցի՝** գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ,** նշյալ օրենսդրական փոփոխություններով կարգավորվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործմանը և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանմանն ուղղված հիմնահարցերը: Զուգահեռաբար, նշվել է, որ մեկնարկել են նվերների ռեեստրի էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները: Ըստ **Հասարակական մշտադիտարկման զեկույցի**՝ թեև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված

նվերների ինստիտուտի կատարելագործմանը և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանմանն ուղղված օրենսդրական փաթեթն ընդունվել է, նվերների ռեեստրի տեխնիկական առաջադրանքը չի մշակվել 2022թ.–ի դրությամբ: Ըստ այդմ, քանակական գնահատումների արդյունքներով գործողությունը **կատարված** է **մեծամասամբ**, իսկ որակական արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) իրականացված է **ոչ ամբողջական** (ոչ համապատասխան է ամբողջական խնդրի (արդյունքի) նպատակին), քանի որ հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորման ուղղված հաշվետվողականություն, թափանցիկություն և բարեվարքության ապահովմանն ուղղված կառուցակարգը, այն է՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների գործիքակազմն ամբողջապես ներդրված չէ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հակակոռուպցիոն քաղաքականության առաջարկներ

- **Հակակոռուպցիոն կրթություն**
  - Նախադպրոցական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, հետբուհական ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն կրթության կառուցակարգերի ներդնում, առկա կառուցակարգերի կատարելագործում՝ ըստ յուրաքանչյուր սուբյեկտային կազմի (սաներ, աշակերտներ, ուսանողներ, դաստիարակչական և մանկավարժական կազմ, վարչական մաս) և տարիքային առանձնահատկությունների:
  - Հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության կառուցակարգերի ներդնում, առկա կառուցակարգերի կատարելագործում (հակակոռուպցիոն կրթական ծրագրեր, ցանցեր, դպրոցներ, լաբորատորիաներ և ակումբներ, հանդեսներ, ներկայացումներ, բեմադրություններ, խաղեր, մուլտֆիլմեր, վերապատրաստումներ, կառավարության և հակակոռուպցիոն պատկան մարմինների պատվերով գիտական հետազոտությունների իրականացում՝ կիրառական նպատակներով, ազգային և միջազգային գիտաժողովներ):
  - Հակակոռուպցիոն ուսումնական և մեթոդական նյութերի մշակում և տարածում (ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության) ըստ յուրաքանչյուր սուբյեկտային կազմի (սաներ, աշակերտներ, ուսանողներ, դաստիարակչական և մանկավարժական կազմ, վարչական մաս) և տարիքային առանձնահատկությունների:
  - Հակակոռուպցիոն կրթության ոլորտում ներդնել արհեստական բանականության գործիքներ՝ զուգահեռ բարձրացնելով հանրային ծառայողների, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, և լայն իմաստով՝ հանրության թվային (digital) անվտանգության և գրագիտության վերաբերյալ իրազեկման մակարդակը:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- **Իրավիճակային (ad hoc) շահերի բախման կանխարգելում և կառավարում**
  - Պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ ևս կիրառել «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված բարեվարքության համակարգը, այդ թվում՝ շահերի բախման կարգավորումները:
  - Շահերի բախման ընդհանուր կարգավորումները սահմանել «Կոռուպցիայի կանխարգելման մասին» նոր օրենքով՝ առանձին գլխով:
  - Վերանայել դատավորների, դատախազների, ԱԺ պատգամավորների, համայնքի ավագանու անդամների, ինչպես նաև հանրային ծառայության առանձին տեսակների շահերի բախման կարգավորումները՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան ոլորտային օրենքներում նախատեսելով հատուկ սահմանումներ և կանոնակարգումներ՝ հաշվի առնելով ոլորտային անառանձնահատկությունները և դրանց դարձնելով ավելի համահունչ շահերի բախման նոր կարգավորումներով ներդրված ստանդարտներին:
  - Սահմանել վարչական պատասխանատվության միջոցներ՝ վերադաս կամ անմիջական ղեկավար հանդիսացող, ինչպես նաև առհասարակ բարեվարքության հարցերով պատասխանատու այլ պաշտոնատար անձանց կողմից՝ իրավիճակային շահերի բախման պայմանների պահպանման կանոնների խախտման վերաբերյալ իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման համար:

- **Նվերների ընդունման սահմանափակումներ**
  - Ընդունել նվերների ոլորտի օրենսդրական փոփոխությունների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերի, մասնավորապես՝ նվերների ռեեստրի վարման կարգը:
  - Սահմանել վարչական պատասխանատվության միջոցներ՝ վերադաս

կամ անմիջական ղեկավար հանդիսացող, ինչպես նաև առհասարակ բարեվարքության հարցերով պատասխանատու այլ պաշտոնատար անձանց կողմից՝ նվերների ընդունման սահմանափակումների պահպանման կանոնների խախտման վերաբերյալ իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման համար:

- **Անհամատեղելիության պահանջներ, մասնավորապես՝ սեփականության իրավունքից հրաժարվելու պահանջ**
  - Վերացնել հավատարմագրային կառավարման ոլորտի օրենսդրության անկատարությունները, որի շրջանակներում նախատեսել մեխանիզմներ, որոնք բխում են բաժնեմասնակցությունը մասնագիտացված հավատարմագրային կառավարման ընկերություններին հանձնելու պահանջի էությունից, օրինակ՝ վերանայել անհատ ձեռնարկատերերի կողմից հավատարմագրային կառավարման իրականացման հնարավորությունը, դիտարկել «Հավատարմագրային կառավարման ընկերությունների մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակահարմարության հարցը:
  - Կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ և ընդունել դրանց կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական այնպիսի իրավական ակտեր, ինչպիսիք են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստր և վարման կարգը՝ նախատեսելով նշյալի վերաբերյալ վիճակագրության վարմանը և հրապարակայնացմանն ուղղված իրավանորմեր:
  - Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների համար նախատեսել նրանց կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման կանոնների խախտման դեպքերում վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ դրույթներ:
  - Սահմանել վարչական պատասխանատվության միջոցներ՝ վերադաս կամ անմիջական ղեկավար հանդիսացող, ինչպես նաև առհասարակ

բարեվարքության հարցերով պատասխանատու այլ պաշտոնատար անձանց կողմից՝ անհամատեղելիության պահանջների պահպանման կանոնների խախտման վերաբերյալ իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման համար:

- **Այլ սահմանափակումներ, մասնավորապես՝ հետաշխատանքային սահմանափակումներ**
  - Օրենսդրությամբ «այլ սահմանափակումներ»-ի յուրաքանչյուր տեսակի համար նախատեսել առանձին հոդված, որով սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կոնկրետ սահմանափակման շրջանակը, կիրառման պահանջները և պայմանները, դրանք կիրառող պաշտոնատար անձանց և մարմինների շրջանակը, պահպանման նկատմամբ վերահսկողության գործիքները և կառուցակարգերը:
  - Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների համար նախատեսել նրանց կողմից այլ սահմանափակումների պահպանման կանոնների խախտման դեպքերում վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ դրույթներ:
  - Սահմանել վարչական պատասխանատվության միջոցներ՝ վերադաս կամ անմիջական ղեկավար հանդիսացող, ինչպես նաև առհասարակ բարեվարքության հարցերով պատասխանատու այլ պաշտոնատար անձանց կողմից՝ այլ սահմանափակումների պահպանման կանոնների խախտման վերաբերյալ իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման համար:
  - Վերանայել հետաշխատանքային սահմանափակման սահմանումը՝ ներառելով «մասնավոր ընկերություն» եզրույթը, դիտարկել ոլորտային առանձնահատկություններով պայմանավորված հետաշխատանքային գործունեության սառեցման ժամանակահատվածի տարբեր տևողությունների նախատեսման նպատակահարմարության հարցը, հստակ սահմանել դրանց սահմանափակման կիրառման պայմանները որոշում, կայացնողների շրջանակը և սահմանափակման պահանջների նկատմամբ վերահսկողության գործիքները:

- **Գնումների ոլորտ**
  - Գնումների ոլորտում շահերի բախման կանխարգելմանն ուղղված ավելի խիստ կարգավորումների նախատեսում, որոնցով կսահմանափակվի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքի անդամ հանդիսացող փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մասնակցությունը այն պատվիրատուների կողմից կազմակերպվող գնումներին, որտեղ վերջինս պաշտոնավարում է կամ համակարգում է այդ ոլորտի գործունեությունը:
  - Պետական գնումների ոլորտում շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող հայտարարատու անձանց ցանկի ընդլայնում, որը կներառի այն պաշտոնատար անձանց, որոնք հանդիսանում են գնումների գնահատող հանձնաժողովի անդամ կամ այլ եղանակով մասնակցում են գնումների ոլորտին առնչվող որոշումների կայացման գործընթացին:
  - Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցների համակարգի վերանայում պետական գնումներում կոռուպցիայի և շահերի բախման կանխարգելման լույսի ներքո, օրինակ՝ պետական գնումներին մասնակցությունից զրկելու պահանջի նախատեսում:
  - Կոռուպցիոն հանցագործություն կատարելու հիմքով անձանց պետական գնման ընթացակարգի մասնակցության իրավունքից զրկելու վերաբերյալ առանձին վիճակագրության նախատեսում:
  - Գնումների մասնակիցների կողմից ներկայացված շահերի բախման բացակայության մասին հայտարարության և վերջիններիս իրական սեփականատերերի մասին տեղեկությունների ստուգման արդյունավետ մեխանիզմների նախատեսում, օրինակ՝ ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների էլեկտրոնային գրանցամատյանի (ARMEPS) և ԿԿՀ-ի հայտարարագրման էլեկտրոնային համակարգի փոխկապակցում, որի միջոցով էլեկտրոնային գնումների տվյալները կփոխանցվեն ԿԿՀ-ին՝ ներառյալ շահերի բախման առկայության կամ բացակայության մասին հայտարարությունները: